ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 1-ը Շվեդիայի Թագավորության քաղաք Ստոկհոլմ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Էդգար Մկրտչյան

Վիկտորյա Այդինյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Էդգար Մկրտչյան - ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակի ղեկավար

Վիկտորյա Այդինյան - ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները

2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 1-ը Շվեդիայի Թագավորության քաղաք Ստոկհոլմ

4. Հրավիրող կողմը

Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի («ՍԱԼԱՐ») դուստր կառույց «ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ»՝ Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացմանն ու տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞րն խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած ապակենտրոնացման բարեփոխումների համատեքստում ծանոթանալ Շվեդիայի ապակենտրոնացման քաղաքականությանը, վեր հանել դրական փորձն ու հնարավոր ռիսկերը, Հայաստանում կիրառելի լուծումները և ըստ այդմ՝ նախանշել «Աջակցություն

Հայաստանում ապակենտրոնացմանն ու տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրով ակնկալվող փորձագիտական աջակցության հիմնական շրջանակը:

6. Քննարկված թեմաները

- Շվեդիայի քաղաքական, ադմինիստրատիվ և ֆիսկալ ապակենտրոնացման համակարգը՝ կենտրոնանալով կառավարման տարբեր օղակների միջև և դրանց ներսում լիազորությունների բաշխման, հաշվետվողականության ու վերահսկման ընթացակարգերի վրա,
- Շվեդիայի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների հիմնական շրջանակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալական ու կրթական ծառայություններին,
- Շվեդիայի ֆիսկալ ապակենտրոնացումը, ներառյալ՝ հարկային համակարգը, ֆինանսական համահարթեցման սխեման,
- Ապակենտրոնացման քաղաքականության մշակման, իրականացման ու մշտադիտարկման համակարգը սպասարկող տվյալների շտեմարանները, փաստահենք քաղաքականությունների համար անհրաժեշտ վերլուծական ու հետազոտական աշխատանքների իրականացումը,
- Շվեդիայի տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի դերը ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ իրացման համատեքստում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Քննարկումների արդյունքում պատվիրակությունը շվեդ գործընկերներին ներկայացրել է Հայաստանում ապակենտրոնացման քաղաքականության ընդհանուր շրջանակը, ներկա զարգացումներն ու նախատեսվող բարեփոխումները, այդ թվում՝ համադրությունը Շվեդիայի համակարգի հետ, ապակենտրոնացման տարբեր բաղադրիչների հնարավոր տեղայնացումը:

Քննարկվել են ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ իրականացման խոչընդոտները, շվեդական փորձից քաղված դասերը, փոխադարձ վստահության ու փաստահենք քաղաքականությունների մշակման կարևորությունը բարեփոխման հաջողության տեսանկյունից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստորագրվել են փոխըմբռնման 2 հուշագրեր՝

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, «ՍԱԼԱՐ»-ի և «ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ»-ի միջև
- ՀՀ ֆինանսների նախարարության, «ՍԱԼԱՐ»-ի և «ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ»-ի միջև

Կողմերը պարտավորվել են շարունակել ջանքեր ներդնել «Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացմանն ու տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում Հայաստանի ապակենտրոնացման բարեփոխումների առաջմղման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Կողմերի պայմանավորվածության համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդհանուր համակարգմամբ ծրագրի շրջանակներում վեր կհանվեն Հայաստանում ապակենտրոնացման բարեփոխումների հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները՝ հիմք ընդունելով պետության ռազմավարական գերակայությունները, և քայլեր կձեռնարկվեն շահառու գերատեսչությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ դրանց ուղղությամբ լուծումներ նախանշելու ուղղությամբ:

Համագործակցության շրջանակներում շեշտադրվելու է հատկապես պետական իշխանության բոլոր մակարդակների իջև արդյունավետ երկխոսության կայացումն ու փոխադարձ վստահության միջավայրի ձևավորումը, ինչպես նաև ֆիսկալ ու կրթության ապակենտրոնացման հնարավորությունների դիտարկումը: Նախատեսված է առաջարկվող միջոցառումներն ավարտել 2026 թվականին:

10. Գործուղման ծախսերի վերաբերյալ

Գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգացել է հրավիրող կողմը:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

06.05.2023թ.

Էդգար Մկրտչյան

Վիկտորյա Այդինյան